
ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԸ

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայ տպագրությունն սկզբնավորվել է XVI դարակեսին և մինչև XIX դարասկիզբը հիմնականում ծավալվել է Հայաստանից դուրս՝ Իտալիայում, Հոլանդիայում, Թուրքիայում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Իրանում, Վրաստանում և այլուր: XX դարի առաջին կեսից հայ գրքի ուսումնասիրությունները կենտրոնացան Հայաստանում, Միյուռքում և աշխարհի գիտական խոշորագույն օջախներում գործող մշակութային կենտրոններում: Հայ գրքի և տպագրության ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ գրքագետներ, մատենագետներ, գրականագետներ, բանասերներ, որոնցից առավել հայտնի են Գ. Զարբհանայանը, Լեոն, Ա. Ղազիկյանը, Թեոդիկը, Գ. Լևոնյանը, Ռ. Իշխանյանը, Հ. Դավթյանը, Ս. Շտիկյանը, Ա. Բաբայանը, Գ. Մուքիասյանը: Մակայն դեռևս ամբողջովին և առավել մանրամասն ուսումնասիրված չեն տարբեր երկրներում ու գաղթավայրերում տպագրված հայ գրքի անցյալը և ներկան:

XV դարի 40-ական թվականներին, երբ գերմանացի գյուտարար, Եվրոպայի առաջին տպագրիչ Յոհան Գուտենբերգի ջանքերով տպագրության դարաշրջանի սկիզբը դրվեց, Հայոց կաթողիկոսական աթոռը նոր էր հաստատվել Վաղարշապատում (1441 թ.), և երկար ժամանակ քաղաքական իրավիճակը, տարածաշրջանում չընդհատվող պատերազմները, եկեղեցական իշխանությունների անկայուն դրությունը խանգարում էին Մայր աթոռի լիաշունչ մշակութային գործնեությունը¹:

Հայ տպագրության սկզբնավորողը դարձավ Հակոբ Մեղապարտը²: Նա Իտալիայի Վենետիկ քաղաքում հիմնեց հայկական տպարան, ուր տպագրեց հինգ հայերեն գիրք՝ «Ուրբաթագիրք» (1512 թ.), «Պատարագատետր», «Տաղարան»³, «Աղթարք» և «Պարգատումար»: Պատահական չէ, որ Հակոբ

¹ Ա. Բոգոյան. Գրահրատարակչական գործի սկզբնավորումը Մայր աթոռ Ս. Էջմիածնում. – Հայկական տպագրության 500-ամյակը (1512–2012): Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում: Հանրապետական գիտաժողովի (2010 թ., ապրիլի 15–16) զեկուցումների ժողովածու, Երևան, 2010, էջ 23:

² Գնահատելի է Գևորգ Աբգարյանի ուսումնասիրությունը, որը նոր էջ է բացել հայ գրքի տպագրության պատմության մեջ: Նա հավաստում է, որ Գերմանիայում Յոհաննես Շիլտերգերը դեռևս XV դարասկզբում լատիներեն տառերով գրի է առել □Հայր մեր□ աղոթքի հայերեն բնագիրը, որը Գուտենբերգի հայրենիքում տպագրվել է 37–39 տարով ավելի վաղ, քան հայերեն առաջին տպագիր գիրքը (1512): Շիլտերգերի «Ուղեգրության» առաջին տպագրությունը եղել է 1473–1475 թվականներին Աուգսբուրգում: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ Հակոբ Մեղապարտից շուրջ 40 տարի առաջ Գերմանիայում արդեն տպագրվել էր հայերեն մի բնագիր (Գ. Աբգարյան. Հայ տպագրության նախապատմություն, Երևան, 2001, էջ 3–4):

³ Հակոբ Մեղապարտի տպագրած □Տաղարան□ ժողովածուի տեսակը հետագայում լայն տարածում գտավ թե՛ տպագիր, թե՛ ձեռագիր ձևով (Ա. Դոնոյանյան. Առաջին տպագիր «Տաղարանը». – Հայկական տպագրության 500-ամյակը (1512–2012), էջ 12:

Մեղապարտն իր տպագրական գործունեության վայրն ընտրել էր Վենետիկը:

Գուտենբերգի տպագրական արվեստը XV դ. կեսերին հասել էր Բոտալիա, իսկ դարավերջում այդ քաղաքը դարձել էր եվրոպական տպագրության ամենախոշոր կենտրոնը: XVI դարի սկզբներին քաղաքում գործել է մոտ 250 տպարան: Վենետիկն իտալական մյուս քաղաքներից ավելի հարմար էր հայկական տպագրություն սկզբնավորելու համար նաև այն պատճառով, որ կաթոլիկական գրաքննությունը այստեղ մեղմ էր, և անձանոթ լեզվով գիրք հրատարակելու հաջողության հավանականությունը՝ ավելի մեծ: Վերջապես, հայերեն տպագրություն սկսելու համար Վենետիկն ուներ նպաստավոր նաև մի այլ պայման. այստեղ վաղուց ի վեր կար հայկական համայնք: Հակոբ Մեղապարտի գործունեությունից հետո հայկական տպագրության կեսդարյա դարար է եղել:

Աբգար Դպիր Թոխաթեցին՝ հայ երկրորդ տպագրիչը, Միքայել Սեբաստացի կաթողիկոսի և Սեբաստիայում 1562 թ. գումարված եկեղեցական ժողովի որոշմամբ Հռոմ է ուղևորվում քաղաքական կարևոր առաքելությամբ՝ ներկայացնել Պապին և կարգավորել հայ ժողովրդի անելանելի վիճակը: Եթե Աբգարի քաղաքական առաքելությունը մնում է անկատար, ապա մշակութայինն ավարտվում է լուրջ ձեռքբերումներով՝ այս իսկապես հետաքրքիր գործչի համար կարևոր տեղ ապահովելով հայ մեծերի պանթեոնում⁴: Նրան հաջողվում է Հռոմի պապից հայերեն տպատառեր պատրաստելու թույլտվություն ստանալ: Վերադարձին, մինչև Կ. Պոլիս հասնելը, նա իջևանում է Վենետիկում և 1565 թ. թղթի մի թերթի վրա տպագրում է հայերեն տպագիր առաջին օրացույցը՝ «Խառնափնջուր տումարի գեղեցիկ և պիտանի» վերնագրով: 1565–1566 թթ. նա Վենետիկում տպագրում է «Սաղմոսարան», ապա տպագրական պարագաները տանում է Կ. Պոլիս և Ս. Նիկողայոս երկու եկեղեցիներից մեկի բակում հիմնում է իր տպարանը: 1568-ին Աբգարը լույս է ընծայում հայերեն առաջին տպագիր դասագիրքը՝ «Փոքր քերականությունը»: Այնուհետև նա տպագրում է «Տոնացույց», «Պարզատումար», «Աղոթամատույց», «Պատարագամատույց», «Տաղարան», «Մաշտոց»: Սուլթանշահը, որը հոր հետ Հռոմ էր գնացել, Պիոս IV պապի կողմից որդեգրվում է և անվանվում Մարկանտոնիո: Սուլթանշահը մնում է Հռոմում, հեղինակություն է ձեռք բերում Վատիկանում, օգնում է պանդուխտ հայերին և 1579-ին Հռոմի Գրիգոր VIII պապից կարգադրություն է ստանում հայերեն տառեր ձուլելու: Տպագրում է մի շարք գրքեր, ապա գործնական կապեր է հաստատում քահանա Հովհաննես Տերզնցու հետ: 1584-ին նրանք տպագրում են Պապի կազմած նոր տումարի հայերեն փոխադրությունը՝ «Տումար Գրիգորյանն հավիտենական»: 1587-ին Տերզնցին Վենետիկում տպագրում է «Սաղմոսարան»⁵: Աբգարը Պոլսից անցնում է Էջմիածին (1569 թ.)՝ Միքայել

⁴ Ս. Մ ի թ ա ղ ա ն. Աբգար Դպիր Թոխաթեցին և իր տպագրած գրքերը. – Հայկական տպագրության 500-ամյակը (1512–2012), էջ 49:

⁵ Գիրք գրքի մասին, Երևան, 2006, էջ 82:

կաթողիկոսի մոտ, իսկ հետո ուր է գնում և ինչ անում՝ որևէ տեղեկություն չկա⁶:

Հ. Տերզնցու գործունեությանը ավարտվում է հայ տպագիր գրքի պատմության առաջին դարը: Այդ ժամանակաշրջանից հայ տպագրիչների ձեռքով տպագրված երկերից մեզ հասել է 18 անուն-հրատարակություն: Այդ շրջանում եվրոպացիների տպագրած 9 գրքեր կան, որոնցում տպագիր հայերեն նմուշներ կամ այբուբեններ կան, այսինքն՝ XVI դարից առայժմ հայտնի է 27 հայատառ տպագրություն⁷:

Հայ տպագիր գիրքը XVII դարում՝ մինչև 1660-ական թվականները, շարունակում էր ստեղծվել տարբեր վայրերի տպարաններում: XVII դարի հայերեն առաջին տպագրությունը կատարվել է Հռոմում 1603 թվականին. այն կոչվում է «Բ կարճառոտ վարդապետութենե քրիստոնեից»: Այս քաղաքում հայերեն գրքերը հրատարակվում էին Վասիկանի Հավատի քարոզչության տպարանում, որն ընդունված է կոչել Ուրբանյան: Հռոմում տպագրված հայերեն գրքերի մեծ մասը դավանաբանական-քարոզչական բնույթ ունի:

XVII դարում հայ մշակութային վերելքի մեկ այլ դրսևորում էր հայ տպագրության ասպարեզ գալը Բրանում, որը կապվում է Խաչատուր Կեսարացու անվան հետ. նա մտադրվում է հիմնել տպարան, որ դեռ Բրանում չկար: Պարսկահայ առաջին գիրքը՝ «Հարանց վարքը», լույս է տեսնում 1641 թվականին: Կեսարացին մեծ ցանկություն ուներ Նոր Ջուղայում զարգացնել հայ տպագրությունը, ուստի 1639 թ. Եվրոպա է ուղարկում իր աշակերտներից մեկին՝ Հովհաննես Ջուղայեցուն, որպեսզի նա այնտեղ ուսումնասիրի տպագրական գործը, նոր տառեր ձուլել տա և տպագրական անհրաժեշտ պարագաներով վերադառնա հայրենիք: «Հարանց վարք»-ից հետո անմիջապես տպագրության է հանձնվում «Ատենի ժամագիրքը» (1642 թ.): Ջուղայեցին հասնում է Բտալիա, Հռոմում հմուտ վարպետների պատվեր է տալիս մի քանի նոր տեսակի և մեծության հայկական տառեր պատրաստել: Ապա Հռոմից անցնում է Լիվոռնո: Բտալիական մի տպարան հանձն է առնում տպագրել «Մաղմուս», որը Ջուղայեցին ուղարկում է Նոր Ջուղա՝ իր «հոգևոր ծնողին»՝ Խաչատուր Կեսարացու հավանությանը. գիրքը լույս է տեսնում Լիվոռնոյում 1644 թվականին: 1647 թ. Ջուղայեցին ծննդավայրում լույս է բնծայում «Պարգատումարը»՝ իր ուսուցչի հիշատակը հավերժացնելու համար: Հետագայում Նոր Ջուղայի տպարանը դադարի է մատնվում, ապա 80-ական թվականներին այնտեղ դարձյալ տպագրվում են հայերեն գրքեր:

XVII դարում հայ գրքի պատմության ասպարեզում ամենախոշոր իրադարձությունը Ոսկանյան տպարանի գործունեությունն էր Հոլանդիայում, Բտալիայում և Ֆրանսիայում: Խաչատուր Կեսարացու դպրոցի աշակերտներից մեկը՝ Հակոբ վարդապետ Ջուղայեցին, հետագայում Էջմիածնում եպիսկոպոսության աստիճանի հասած լինելով, Փիլիպոս կաթողիկոսի մահից հետո ընտրվում է կաթողիկոս (1655 թ.): Հակոբ Դ-ն կաթողիկոսական

⁶ Բ. Սր ա պ յ ա ն. Աբգար Դպիր Թոխաթեցի և որդին Սուլթանշահ: Երկրորդ տպագրիչ ի Վենետիկ և ի Պոլիս 1565–68.– «Հիշատակարան», պր. ՇԷ, Կ. Պոլիս, 1911, էջ 258:

⁷ Ռ. Բ շ ի ա ն յ ա ն. Հայ գիրքը 1512–1920, Երևան, 1981, էջ 44:

քարտուղար և ծաղկող դպիր Մատթեոս Ծարեցուն 1656 թ. ուղարկում է Եվրոպա, տեղի գաղութահայ վաճառականների նյութական օժանդակությամբ հայկական տպարան հիմնելու հանձնարարականով: Ծարեցին Հռոմում և Վենետիկում չի կարողանում դրական արդյունքի հասնել և որոշում է գնալ Հոլանդիա, ուր այլադավան գրքերի հրատարակությունը չէր հետապնդվում: 1658 թ. հասնում է Ամստերդամ, ուր հայ բնակչությունը զգալի թիվ էր կազմում և ուներ սեփական եկեղեցի: Նա որոշում է տպագրել հայերեն Աստվածաշունչ: Սակայն հիվանդանում է և իր մոտ է կանչում Էջմիածնի միաբան Ոսկան վարդապետի վաճառական եղբորը՝ Ավետիս Դլիճենցին, և նրան առաջարկում շարունակել իր գործը: Ծարեցին արդեն մեծ պարտքերի տակ էր. Ավետիսը պետք է վճարեր դրանք, իսկ Ծարեցու մահից հետո դառնար տպարանի սեփականատերը: Համաձայնությունը կայանում է և որոշվում է տպարանը նվիրել «Ս. Էջմիածնի և Ս. Սարգիս գորավարի» անվան: Ծարեցու մահից հետո Դլիճենցը վճարում է ձուլարանի պարտքերը, ապա մի կերպ շարունակում անկատար մնացած «Յիսուս Որդի»-ի տպագրությունը: Տեսնելով, որ գիրք տպագրելն իր ուժերից վեր է, նա նամակ է գրում եղբորը՝ Ոսկան վարդապետին, որ գա Ամստերդամ և տպագրության գործի գլուխ անցնի: Կաթողիկոսն իր համաձայնությունն է տալիս: Բայց մինչ նրա գնալը, Ամստերդամ է ուղարկում իր աշակերտ Կարապետ վարդապետ Ադրիանեցուն: Ավետիսը, մինչ եղբոր գալը, տպագրության է հանձնում «Ժամագիրք» (1663 թ.): Երբ Ոսկան Երևանցին հասնում է Ամստերդամ, Կարապետ Ադրիանեցին տպարանի և հրատարակչության տնօրինությունը հանձնում է նրան, որի առաջին գործը լինում է ձեռնարկել Աստվածաշնչի տպագրությունը: Ոսկանը տպագրության է հանձնում հայերեն լեզվի մի դասագիրք՝ հետը միացնելով կրոնի դասընթացը՝ «Այբբենարան և քրիստոնեական» (1666 թ.): Երբ ամեն ինչ ձեռք էր բերված և տպագրական փորձն էլ արդեն բավարար էր, Ոսկան Երևանցին ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի տպագրությանը 1666 թվականին: Գրքի տպագրությունը տևում է երկուսուկես տարի: Այն լույս տեսավ 1668 թվականին: Ոսկանյան Աստվածաշունչը համարվում է հայ հին տպագրության պսակը: Ոսկան Երևանցին փայլուն իրագործեց այն նպատակը, որին ձգտում էին հայ տպագրիչներն ավելի քան 150 տարի: Ոսկանյան տպարանը Ամստերդամում շարունակեց գործել մինչև 1669 թվականը: Այդ տարիներին նրա տպարանից լույս է տեսել 12 անուն գիրք ևս: Դրանցից աչքի են ընկնում առաջին անգամ Ավետարանի (Նոր Կտակարան) տպագրությունը, «Մաշտոցը», իսկ պատմական-գրական տեսակետից արժեքավոր են «Աղվեսագիրքը» և Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհագրությունը»: Ոսկան վարդապետը Ամստերդամում շարունակում է իր տպագրական-հրատարակչական աշխատանքը մինչև 1669 թվականը՝ դարձյալ լույս ընծայելով 2 գիրք՝ «Ձայնքաղ շարական հայկական խազերով» և Առաքել Դավրիժեցու «Պատմությունը» (երկուսն էլ նույնպես առաջին հրատարակությամբ):

1669 թ. Ոսկան Երևանցին լատիներեն մի աղերսագիր է հղում Փարիզ՝ Լուի XIV թագավորի անունով, ուղարկելով նաև իր տպագրած Աստվածաշնչից մեկ օրինակ, և խնդրում իրեն թույլ տալ Ֆրանսիայում հայկական

տպարան բացելու: Թագավորի հրամանագրով նրան այդ իրավունքը շնորհվում է, սակայն այն պայմանով, որ «հրատարակելի գրքերը ուղղափառ, հռոմեական կրոնից վարդապետության և հավատալից հակառակ բան չպարունակեն»: Ոսկանն իր աշխատակիցներին կարգադրում է տպարանի գույքը տանել Մարսել, իսկ ինքն անցնում է Իտալիա և կանգ առնում Լիվոռնո քաղաքում, ուր գտնվում էին իր մեկենասները՝ երեք ջուդայեցի վաճառականները: Սակայն մեկենասները նրան չեն օգնում և նույնիսկ չեն տալիս նրա գրքերի վաճառքից իրենց մոտ եղած գումարները: 1672 թ. Ոսկանը Մարսելում սկսում է իր աշխատանքը: Առաջին գիրքը, որ լույս է տեսնում 1673 թ., կոչվում է «Գրքույկ կարևոր հանապազորդյան»: Մարսելում Ոսկանի հիմնած տպարանն իր գոյությունը հինգ-վեց տարիների ընդհատումով պահում է մինչև 1683 թվականը:

Ոսկանի խմբից գրաշար Մատթեոս Հովհաննիսյան-Վանանդեցին, Ամստերդամ գնալով, որոշում է վերսկսել տպագրական գործն իր ընկերների հետ: Նրա տպարանից լույս են տեսնում «Շարական» (1685 թ.) և «Ժամագիրք» (1686 թ.): Մատթեոսն իր ազգականներ Թովմաս, Ղուկաս և Միքայել Վանանդեցիների հետ 1695 թ. լույս է ընծայում աշխարհագրական մի մեծադիր քարտեզ, որ կոչվում է «Համատարած աշխարհացույց», ունենալով իր բանալին, որ լույս տեսավ 1696 թվականին: Վանանդեցիների երկրորդ հրատարակությունը նույն թվականին տպագրած Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է: Մինչև դարավերջ Ամստերդամի տպարանը լույս է ընծայում ևս մի քանի գրքեր, բայց առավել ուշադրության են արժանի 1699 թվականին լույս տեսած երկու գրքույկ՝ «Դուռն իմաստության» կամ «Ոսկյա դուռն դպրատան» և «Գանձ չափոց, կշռոց, թվոց և դրամից բոլոր աշխարհի» վերնագրերով:

Ոսկան Երևանցու և նրա տպարան-հրատարակչության շնորհիվ XVII դ. 70-ական թվականներին ասպարեզ եկավ աշխարհաբար առաջին գիրքը: «Արհեստ համարողության»-ը (1675 թ.), լինելով տպագիր աշխարհաբար առաջին գիրքը, նաև հայերեն թվարանական առաջին տպագիր գիրքն էր: Երևանցու մահից հետո հայկական տպարանն աշխատեց ևս տասներկու տարի և 1686-ին վերջնականապես փակվեց:

Ոսկան Երևանցին պատրաստեց առաջնակարգ տպագրիչներ, որոնք տարբեր վայրերում շարունակեցին նրա գործը⁸: 1717թ. պարտքատերերի կողմից տպարանի բռնագրավման պատճառով մշակութային այս կարևոր կենտրոնը դադարեցնում է իր գործունեությունը: Դրանով Եվրոպայում ընդհատվում է հայ ինքնուրույն տպագրությունը:

XVIII դարում հայ գրահրատարակչության տեղաշարժ է կատարվում դեպի Արևելք՝ Կ. Պոլիս: Աբգար Թոխաթցուց հետո այստեղ երկար տարիներ դադարի է մատնվում հայ տպագրության գործը: 1677 թ. Կ. Պոլսում տպարան հիմնելու փորձ արել է իր ժամանակին հայտնի գիտնականի համբավ ունեցող Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը: Տարիներ անց տպագրիչ Գրիգոր Մարզվանեցին ձեռք է բերում Քյոմուրճյանից մնացած տպագրական տառերը, սարքեր, հիմնում է տպարան և լույս ընծայում

⁸ Ռ. Իշխանյան. Ոսկան Երևանցի (1614-1674), Հայ հին տպագրության խոշորագույն դեմքը. - Հայաստանի գրքերը, Երևան, 2008, - 3, էջ 5-6:

մի «Տաղարան» (1698 թ.): Մարզվանեցու գործունեությունը տևել է մոտ 40 տարի: Կ. Պոլսում գործել է նաև Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանը. նրա գործունեությունը տևել է մոտ 50 տարի:

XVIII դարում Կ. Պոլսում գործել են երկու տասնյակ հայկական տպարաններ: Հատկապես մեծ է Արապյանների դերը հայ գրքի պատմության մեջ: Պողոս Արապյանը պետական տպարանում տպում է Կ. Պոլսի և Թուրքիայի առաջին հայերեն լրագիրը, որը կոչվում էր «Լրո գիր մեծի տերությանն Օսմանյան» (1832 թ.):

Երբ 1839 թ. Կ. Պոլսում Հովհաննես Մյուհենտիսյանը հիմնում է իր տպարանը, ձեռնամուխ է լինում հայկական տպագրական նոր տառերի ստեղծման աշխատանքներին: Այդ տառերը մի նոր աստիճանի են բարձրացնում հայկական տպագրական արվեստը: Եվրոպական փորագրման և գրաձուլման տեխնիկային անձանոթ լինելով՝ նա հնարում է հատուկ գործիք ու մեքենա: Առաջին անգամ Հ. Մյուհենտիսյանն է հնարել հայկական նոտագրության (խազերի) հայրերի ու մայրերի կադապարները: Մյուհենտիսյանի վարպետությունն այնպիսի հռչակ է ձեռք բերում, որ օսմանյան կառավարությունը նրան հրավիրում է պետական փողերանոցը՝ թուրքական թղթադրամներ պատրաստելու և տպագրելու համար⁹:

Հայկական տպագրական երկրորդ խոշոր կենտրոնը եղել է Զմյուռնիան: Առաջին անգամ այստեղ է տպագրվել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (1762 թ.):

XVIII դարում Վենետիկում հայերեն գրքեր են լույս ընծայել Ա. Բորտոլին, Ս. Օրլանդոն, Ջ. Բաշոն, Բ. Ջերոլիմոն, Պ. Վալվազին, Ջ. Պիացցան: Նույն դարում եվրոպացիները հայերեն լեզվով կամ հայերեն հատվածներով գրքեր տպագրել են նաև Լոնդոնում, Փարիզում, Հռոմում, Պարմայում, Հարլեմում, Նյուրնբերգում և այլ քաղաքներում¹⁰:

XVIII դարում Եվրոպայում հայերեն գրքերի հրատարակման գործում մեծ դեր են կատարում Մխիթարյանները: Ս. Ղազարի միաբանությունն իր կղզում տպարան է հիմնում 1789 թվականին: Մխիթար Սեբաստացու հիմնադրած միաբանությունը, որ հետագայում Նապոլեոնի հրովարտակով վերանվանվեց «իսկական ակադեմիա», դարձավ հայագիտության դարբնոցը, որտեղ ստեղծվեցին բառարանագրական, քերականական, մատենագիտական, կրոնական, պատմագիտական և բանասիրական բնույթի աշխատություններ¹¹: Դրանց գլուխգործոցը «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» երկհատոր բառարանն է (1836–37 թթ.), որը հայ գրքի տպագրության կոթողներից է: Տպարանը ժամանակին կատարել է հսկայածավալ աշխատանք՝ հրատարակելով հարյուրավոր գրքեր և մի քանի պարբերականներ՝ «Տարեգրություն» (1800–1802 թթ.), «Եղանակ Բյուզանդյան» (1803–1820 թթ.), «Դիտակ Բյուզանդյան» (1812–1819 թթ.), «Բազմավեպ» (1843-ից մինչ օրս):

⁹ Ա. Բ ա բ ա յ ա ն. Հայ գիրքը և տպագրությունը, Երևան, 1963, էջ 88:

¹⁰ Ռ. Բ շ խ ա ն յ ա ն. Հայ գիրքը 1512–1920, էջ 82–83:

¹¹ Լ. Խ ա չ ա տ ը յ ա ն. «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» աշխատությունը որպես գրաբարի բառարանագրական տպագիր հուշարձան. – Հայկական տպագրության 500-ամյակը (1512–2012), էջ 17:

1801–1920-ին Վենետիկի Մխիթարյան տպարանը լույս ընծայեց հայ մատենագիրների երկեր, հայագիտական աշխատություններ (Գ. Ավետիքյանի, Մ. Ավգերյանի, Ա. Բագրատունու, Ղ. Ալիշանի, Գ. Զարբհանայանի և այլոց), անտիկ հեղինակների, եվրոպական դասականների թարգմանական գործեր, գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ գրքեր, պարբերական հրատարակություններ: Այդ տպարանն ամենաերկարակյացն է հայ տպագրության պատմության մեջ:

Վենետիկի Ս. Ղազար կղզու վրա հաստատված Մխիթարյան միաբանությունից 1772 թ. հեռանում են սկզբում 2, ապա 18 միաբան և հավաքվում Տրիեստ քաղաքում, որը XIV դարում Բուստրիայից անցել էր ավստրիական կայսրությանը: Նրանք ընդունում են Ավստրիայի հպատակություն և արտոնագիր ստանում միաբանության համար: 1775 թ. Տրիեստի Մխիթարյաններին իրավունք է շնորհվում «բանալու հայ և հռոմ տառերով մի տպարան»: Մեկ տարի անց այդ տպարանից լույս է տեսնում առաջին հրատարակությունը, որ կոչվում է «Հորդորակ առ պաշտոնասիրություն Ս. Աստվածածնի»: 1795 թ. տպարանն ունեցել է 47 տեսակի տառ: 1811-ին Տրիեստից Վիեննա տեղափոխված Մխիթարյանների երկրորդ միաբանությունը շարունակեց իր տպագրական գործունեությունը՝ լույս ընծայելով հայերեն գրքեր և մի քանի պարբերականներ, այդ թվում՝ «Հանդես ամսօրյա» հայագիտական ամսագիրը (1887-ից առ այսօր):

Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանը փակվել է 1998 թվականին: Տպարանն իր գոյության ընթացքում անցել է բազմաթիվ դժվարությունների միջով: Անցյալ դարի 90-ական թվականներին Վիեննայի Մխիթարյանները տպել են գրքեր Վենետիկի Մխիթարյան միաբանության «Կազա Էդիտրիչի Արմենա» հրատարակչության պատվերով: Այդպիսի համագործակցությունը ստեղծեց հնարավորություն Մխիթարյան միաբանության երկու՝ Վենետիկի և Վիեննայի ճյուղերի վերամիավորմանը, որոնք 2000 թ. հուլիսին՝ 228 տարվա բաժանումից հետո, նորից միասին են¹²:

XVIII դարի 70–80-ական թվականներին հայկական տպագրություն սկզբնավորվեց Հայաստանում: Հայաստանյան եկեղեցին, որ պատմական հանգամանքների բերումով էական դեր էր կատարում հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում, XVI դարում արդեն լուրջ հետաքրքրություն էր ցուցաբերում տպագրական գործի նկատմամբ: Հայ եկեղեցու մի շարք ներկայացուցիչների համար հասկանալի էր դարձել հայերեն գրքերի լուրջ պակասը տպագրության միջոցով լրացնելու անհրաժեշտությունը: Դրա վկայությունն է, օրինակ, Կիլիկիայի Ազարիա կաթողիկոսի 1585 թ. Հռոմի պապին գրած նամակը, ուր գանգատ կա հայերեն Աստվածաշնչի խիստ պակասի վերաբերյալ և խնդրանք Հռոմի Գրիգոր XIII պապին՝ հրատարակել այդ գիրքը¹³: Ուստի կաթողիկոսները ստիպված էին տպարաններ պահել կամ հովանավորել Ամստերդամում, Մարսելում, Վենետիկում, Լիվոռնոյում, Կ. Պոլսում, Ջյուրոնիայում,

¹² Բ. Դենչեբ. Կամուրջ Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունների միջև. – Բնօրրան (Երևան), 2004–2007, թիվ 1–2–3–4, էջ 108–113:

¹³ Ռ. Բոլսա նյան. Հայ գիրքը 1512–1920, էջ 25:

Աստրախանում և այլ քաղաքներում: Հատկանշական է, որ հիշատակված քաղաքների տպարաններից շատերը կրում էին «Մուրք Էջմիածնի» անունը, և գրքերը հրատարակվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսների անունից: Ամենայն Հայոց կաթողիկոսարանի հովանու ներքո՝ Վաղարշապատում տպարան հիմնելու միտքն իրականություն դարձրեց Սիմեոն Ա Երևանցի (1763–1780 թթ.) կաթողիկոսը¹⁴: Նա առաջին տպարանը Մայր աթոռ Էջմիածնում հաստատել է 1771 թ., իր երախայրիքը հրատարակել է 1772 թվականին: Դա հիմնադիր հայրապետի «Գիրք Աղոթից որ կոչի Ջրոսարան Հոգևոր» փոքրածավալ գրքույկն է, որը մասնակի «վերատպության», ավելի ճիշտ՝ վերախմբագրման է ենթարկվել նույն հեղինակի կողմից: Այս գիրքը Հայաստանի հողում լույս տեսած առաջին հրատարակությունն է: Դրանով հայկական տպագրությունն իր սկզբնավորումից 260 տարի անց հաստատվեց հայրենիքում: Երկրորդ գիրքը նույն տպարանից լույս է տեսել 1775-ին (թեև կրում է 1774 թվականը), Սիմեոն Երևանցու պատրաստած «Տոնացույցն» - Է⁵: Այսպիսով՝ Սիմեոն Երևանցին կարողացավ անել այն, ինչը դեռևս XVI դարից եղել էր հայ մի շարք գործիչների երազանքը՝ հայրենիքում տպագրել հայերեն գրքեր: Էջմիածնի տպարանի կատարելագործմանը նպաստ է բերել պոլսեցի նշանավոր վարպետ Պողոս Արապյանը, որը որոշ ժամանակ գործել է Էջմիածնում¹⁶: 1868 թ. այստեղ հիմնվում է «Արարատ» Մայր աթոռի պաշտոնական ամսագիրը: Էջմիածնի տպարանի դերը հայ մշակույթի պատմության մեջ նշանակալից է. Հայաստանը XVIII դարում դառնում է տպագրություն ունեցող երկիր:

Երևանում հայ տպագրությունը սկսվել է XIX դարի վերջերին: 1876-ին այստեղ տպարան է հիմնել Ջաքարիա Գևորգյանը, որին միացել է Էմին Տեր-Գրիգորյանը: 1880-ից տպագրվել է Երևանի առաջին պարբերականը՝ «Պսակ» լրագիրը: Մինչև հաջորդ դարի սկզբները Երևանում գործել են նաև այլ տպարաններ՝ «Կուլտուրա», «Ուրարտիա», «Լույս» և այլն:

XIX դարում հայկական տպարաններ են գործել Արևելյան ու Արևմտյան Հայաստանի, նաև Ռուսական կայսրության շատ քաղաքներում:

XVIII դ. հայերեն տպագրություն է իրականացվում նաև Հնդկաստանում: Հնդկահայ վաճառական Շահամիր Շահամիրյանն իր որդի Հակոբի անունով Մադրասում 1772 թվականին հիմնում է առաջին հայ տպարանը: Այդ տպարանից լույս է տեսնում երկու հրատարակություն. առաջինը «Այբբենարանն» է (կամ «Քերականությունը»), երկրորդը՝ «Նոր տետրակ որ կոչի Հորդորակ»: 1773 թ. լույս է տեսնում «Որոգայթ փառաց» անունը կրող գրքույկը, որի վրա թեև որպես հեղինակ գրված է Հակոբ Շահամիրյանի անունը, բայց իրականում նրա հեղինակը Շահամիր Շահամիրյանն է: Նույն տպարանից 1775 թ. լույս է տեսնում Մեսրոպ երեցի «Պատմություն մնացորդաց Հայոց և Վրաց» աշխատությունը: Իսկ 1783 թ. Շահամիր

¹⁴ Ա. Բ ո գ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 27:

¹⁵ Ժ. Դ ա ն ի ե լ յ ա ն. Նոր հայտնաբերումներ Հայաստանի առաջին տպարանի և առաջին հրատարակություններու մասին. - «Հայկազյան հայագիտական հանդես», 1994, հ. ԺԴ, էջ 378-379:

¹⁶ Ռ. Ի շ յ ա ն յ ա ն. Հայ գիրքը 1512—1920, էջ 95:

Շահամիրյանը տպագրում է մի նոր աշխատություն՝ «Տետրակ որ կոչի Նշավակ»: 1780-ական թվականների վերջերին Մադրասում երկրորդ տպարանը սարքավորում է Շիրազից եկած Հարություն քահանա Շնավոնյանը. նա միտք է հղանում առաջին անգամ հայերեն լրագիր հրատարակել: Նրա խմբագրությամբ և հրատարակությամբ 1794 թ. հոկտեմբերից մինչև 1796 թ. մարտ ամիսը լույս է տեսնում «Ազդարար» ամսագիրը: Տպարան եղել է նաև Կալկաթայում:

Ռուսաստանի հայկական գաղթավայրերում XVIII դարի երկրորդ կեսին նախապայմաններ են ստեղծվում հասարակական և մշակութային ազգային ակտիվ գործունեության համար: Հայկական առաջին տպարանը Ռուսաստանում Գրիգոր Խալդարյանի տպարանն էր, որը 1780 թ. Լոնդոնից բերվել էր Պետերբուրգ: Այդ տպարանը Ռուսաստան փոխադրելու գործի նախաձեռնողը ռուսահայերի հոգևոր առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանն էր: Պետերբուրգում (1780–1789 թթ.) տպարանը լույս է ընծայել 14 գիրք, որոնք մեծ դեր են խաղացել հայ մշակութային կյանքում և կրթական գործում: Բավական է հիշատակել Գրիգոր Խալդարյանի «Գիրք, որ կոչի շավիղ լեզվաբանության» (հայ-ռուսական բառարան), Կլեոպատրա Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտության» և այլն:

Գ. Խալդարյանի մահից հետո Հ. Արղությանը Ռուսաստանի հայերի մեջ հանգանակություն կազմակերպեց՝ նրա թողած բազմաթիվ պարտքերը հատուցելու և տպարանը Խալդարյանի ժառանգորդներից գնելու համար: 1789 թ. Արղությանը տպարանը տեղափոխում է Նոր Նախիջևան: Այստեղ գործելու 6 տարվա ընթացքում այդ տպարանում, որն արդեն կոչվում էր «Տպարան Նորին սրբազնության Սուրբ Խաչ վանիցն», տպագրվեց մոտ 20 գիրք: Դրանցից բավական է նշել Ստեփանոս Օրբելյանի «Բան բարառնական ոգյալ դեմառնաբար», Հովհաննես Երզնկացու «Վիպասանություն երկնային մարմնոց շարժմանե», Հովսեփ Արղությանի «Տետրակ համառոտ անվանյալ Դուռն ողորմության» և այլն: Մի շարք հանգամանքներից էլնելով՝ Արղությանը որոշում է տպարանը փոխադրել Աստրախան, որտեղ գտնվում էր նրա մշտական պաշտոնատեղին: Տպարանի այդ նոր տեղափոխությունը կատարվել է 1795-ի կամ 1796-ի վերջերին: Արդեն 1796-ին Աստրախանում տպագրվել է առաջին գիրքը: Դա կայսրուհի Եկատերինա Երկրորդի հրովարտակն էր՝ Պարսկաստանին հայտարարված պատերազմի կապակցությամբ: Գրքույկը տպագրվել է 2 լեզուներով՝ հայերեն և ռուսերեն: Այստեղ 1796–1799-ին տպագրվել են «Ժամանակագրություն հասարակաց աղոթից»-ը, «Կոնդակ օրհնությանը», «Սաղմոսի մեկնիչ»-ը և «Էֆիմերտեն»: Հետագայում՝ շուրջ 20 տարվա ընթացքում, լույս են տեսնում հայերեն գրքեր, տարեցույց, օրացույցներ¹⁷:

Ռուսաստանի հայկական տպագրական օջախների մեջ խոշոր է եղել նաև Մոսկվան: Լազարյան ճեմարանին կից 1829 թ. Պետերբուրգից փոխադրված Հովսեփ Հովհաննիսյանի տպարանի հիմքի վրա այստեղ ստեղծվում է հայկական առաջին տպարանը, որտեղ տպագրվել են «Մուգայք Արարատյան», Սայաթ-Նովայի խաղերի ժողովածուները, հրատարակվել է

¹⁷ Վ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Հայ տպագրությունն Աստրախանում (XVIII դ. վերջ – XX դ. սկիզբ).– Էջեր հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1996, էջ 206–209:

«Հյուսիսսփայլ» ամսագիրը (1858–1864 թթ.) և այլ պարբերականներ: Բացի Լազարյան ձեռնարանի տպարանից՝ Մոսկվայում գործել են նաև հայկական ուրիշ տպարաններ¹⁸:

Ռուսահայերի մտավոր կենտրոնը Թիֆլիսում հայ տպագրությունը սկիզբ է առել XIX դարի 20-ական թվականներին: Հայկական առաջին տպարանն այստեղ հիմնվում է Ներսիսյան դպրոցին կից: Այս տպարանի ստեղծման գործում նյութական մեծ աջակցություն է ցույց տվել վանեցի հարուստ վաճառական Գևորգ ադա Արծրունին: Եվրոպա կատարած իր ճանապարհորդության ժամանակ նա Ամստերդամում գնում է հայկական տպագրական պատրաստի տառեր, բերում է Թիֆլիս և նվիրում բացվելիք Ներսիսյան դպրոցին: Տպարանը սկսում է գործել 1823 թվականից: Այստեղ 1846–47 թթ. տպագրվել է կոպկասահայոց առաջին պարբերականը՝ «Կոպկաս» լրագիրը, ապա 50-ական թվականներին՝ «Մեղու Հայաստանի» լրագիրը: Այս թվականներին տպագրված գրքերից է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին» (1858 թ.):

1870-ական թվականներից սկսած՝ Թիֆլիսում բացվում են «Արոր», «Հերմես», «Մամուլ» և հայկական շատ ուրիշ տպարաններ¹⁹:

1860-ական թվականներին Թիֆլիսում առաջին ու միակ գրավաճառանոցն են հիմնում Ավետիք և Համբարձում Էնֆիաճյան եղբայրները: Նրանք տպարան են բացում և 1860 թ. տպագրում են «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագիրը: Տպագրվում են «Հայկական աշխարհ», «Գարուն», «Մեղու Հայաստանի», «Փորձ» պարբերականները:

Թիֆլիսից հետո հայ տպագրական գործի խոշոր կենտրոն է եղել Արցախը, որտեղ տպագրական գործը ծնունդ է առել XIX դ. առաջին կեսից (1828 թ.): Ղարաբաղում տպագրության գործի կազմակերպողները եղել են Շվեյցարիայի Բագել քաղաքի բողոքական միսիոներները: Սակայն նրանք միայնակ չէին կարող ձեռնամուխ լինել տպագրական գործի կազմակերպմանը. նման ծրագրի կենսագործումը նախ ձեռնարկել է Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը, որի նախաձեռնությամբ տառեր են բերվում Մոսկվայի Լազարյան ձեռնարանից: Գրատպության կազմակերպման գործին առանձին ուշադրություն են դարձնում նաև Գանձասարի Սարգիս մետրոպոլիտ Հասան Ջալալյանը և Շուշիի հայ հասարակության ներկայացուցիչները²⁰: Շուշիում առաջին գիրքը լույս է տեսնում 1828-ին՝ «Պատմություն սուրբ գրոց»-ը: 1836 թ. կառավարության կարգադրությամբ բազելցիներին արգելվում է միսիոներական գործունեություն ծավալել, և նրանք հեռանում են քաղաքից: Միսիոներների տպարանը գնում է Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտը և շարունակում է գրքեր տպագրել: 1837 թ. Այս տպարանը հրատարակում է «Շիլիոնյան կալանավորը», 1839-ին՝ Եսայի կաթողիկոս Հասան Ջալալյանի «Պատմություն կամ հիշատակ ինչ ինչ անցից դիպելաց աշխարհին Ադվանից»-ը, «Մաշտոց»,

¹⁸ Ա. Բ ա բ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 100–101:

¹⁹ Նույն տեղում, էջ 104:

²⁰ Մ. Հ ա բ ու թ յ ու ն յ ա ն. Գրատպության զարգացման միտումները Արցախում (ԼՂՀ) XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին. – Հայկական տպագրության 500-ամյակը (1512–2012), էջ 63:

«Քերականություն համառոտ» և այլն: 1880-ական թվականներին Շուշիում բացվում է նոր, արագատիպ տպարան. այստեղ է առաջին անգամ լույս տեսնում Բաֆֆու «Խենթը» (1881 թ.):

1860-ական թվականներին Բաքվի հայությունը սկսում է հասարակական-տնտեսական կյանքում առաջադիմություն դրսևորել: 1864 թ. այստեղ հիմնվում է Հայոց Մարդասիրական ընկերությունը, որի ջանքերով 1872 թ. բացվում է տպարան. լույս են տեսնում Մխիթար Գոշի, Եզոպոսի «Առակաները» և այլ հրատարակություններ: Հաջորդ տասնամյակում քաղաքում գործում են այլ տպարաններ ևս: 1870-ական թվականներին հայկական տպարաններ են բացվում Գանձակում (Կիրովաբադ), Երևանում և Ալեքսանդրոպոլում:

XIX դ. վերջերին ու XX դարում տպարաններ են բացվում Արևելյան Հայաստանի նաև մի քանի վայրերում՝ Նոր Բայազետում, Գորիսում, Ախալցխայում, Ախալքալաքում և այլուր:

XIX դարում հայկական տպագրություն է սկզբնավորվում Երուսաղեմում: Տեղի հայկական գաղութը հնագույն հայ հատվածներից մեկն է²¹: Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում 1832 թ. հիմնվել է տպարան: Նախաձեռնողը եղել է Զաքարիա Կոփեցին (1780-1846 թթ.): 1833-ի հունվարին տպարանը լույս է ընծայում հայերեն առաջին գրքույկը՝ «Տեսրակ աղոթամատույց վասն ջերմեռանդ աղոթասիրաց որք կամ անձամբ կամ մտոք ներկայանան ի սուրբ տնօրինական տեղիսն Քրիստոսի Աստուծո մերո» վերնագրով: Զաքարիայի հաջորդը՝ Կիրակոս Երուսաղեմացին (1846-1850 թթ.) Վիեննայից բերել է տալիս ձեռքի տպագրական սարք: 1849 թ. լույս է ընծայվում Բսահակ վարդապետի «Հովսեփա Գեղեցկի գրույցքը»: Կիրակոս պատրիարքը Կ. Պոլսի Մյուհենտիսյան տպարանից բերել է տալիս նորաձույլ և վայելչատիպ տառեր ու դրանցով 1850 թ. տպագրում է Պետրոս Աղամալյան-Բերդումյանցի «Մեկնություն թղթոյն Պողոսի առ Եփեսացիս»-ը, Մամվել Ռաբբու «Գործ ոսկեղինիկ» գիրքը և Զաքարիա Խոջենցի «Կտակգիր հոգեշահ բանից»-ը (1853 թ.): 1865 թ. Սուրբ աթոռի տպարանում հրատարակվում է Եղիշեի «Վասն Վարդանա և հայոց պատերազմին»: Գիրքն ունեցել է բազմաթիվ տպագրություններ, տարածվել է «ամեն կողմ», եղել է դպրոցականների հայերեն գլխավոր դասագիրքը և ամեն մի ընտանեկան մատենադարանի մի օրինակը²²: Երուսաղեմում տպագրված գրքերի ցանկում հաճախ կարելի է հանդիպել Ներսես Շնորհալու անվանը: 1833–1933 թթ. Երուսաղեմի տպարանում լույս են տեսել հարյուրավոր գրքեր: Դրանց մեծ մասը կրոնաբարոյական բնույթի են, սակայն կարևոր տեղ են գրավում նաև գրական-բանասիրական-պատմական հրատարակությունները: Այս վերջինների շարքում, մասնավորապես, արժեքավոր են Եղիշե պատմագրի, Հովհան Մանդակունու, Վրթանես Քերթոզի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Մատթեոս Ուռհայեցու աշխատությունները: Հետագայում լույս տեսավ «Դուրյան մատենադարան»-ի շարքը: Տպարանի հրատարակած գրքերի ցանկում

²¹ Լ. Ե. Ն. Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 2, Երևան, 1967, էջ 239:

²² Մ. Ա. Պ. Ա. Վ. Ե. Ն. Նախնիք որոնց որևէ մեկ գործը տպագրված է Ս. աթոռոյ տպարանին մեջ. «Միտն», 1933, նոյեմբեր, էջ 375:

հաճախադեպ է «տոհմային գրականության խոր գիրքը», «արևելյան քրիստոնյա գրականության մեջ անեղբայր Նարեկը»²³, Գրիգոր Նարեկացու «Աղոթամատյան» հոգեհունչ գործը՝ «անհամեմատ գերազանց քան զայլ երկասիրություն թե ազգային և թե օտար հեղինակաց»²⁴, «ամեն հայու տան մեղագիրն ու դեղագիրը»²⁵: Երուսաղեմի Մրբոց Հակոբյանց տպարանի XX դարավերջի հրատարակությունների թվում են Մադաքիա Օրմանյանի, Շնորհք Գալուստյանի, Գրիգոր Տաթևացու, Կարապետ Տեր-Մկրտչյանի, Սահակ Մոռուտի, Արշակ Միքելյանի գործերից:

Երուսաղեմում 1866 թվականից (կարճատև ընդմիջմամբ) առ այսօր հրատարակվում է «Միոն» ամսագիրը՝ որպես հայ միաբանության պաշտոնաթերթ: Տպարանն իր առաքելությունը կատարում է նաև ներկայումս՝ որպես կրոնական եկեղեցական գրքերի գլխավոր հայթայթիչ: Սկզբնավորումից մինչև 1996 թվականը Երուսաղեմի Մրբոց Հակոբյանց տպարանում հայերեն լեզվով լույս է տեսել մոտ 1000 անուն գիրք²⁶:

Մինչև 1920 թ. աշխարհում գործած հայկական 460 տպարաններում տպագրվել են հայերեն այնքան գիրք և պարբերական, որը կազմում է համաշխարհային գրքային ողջ արտադրանքի 14, 5 %-ը²⁷:

Հայաստանի խորհրդայնացումից հետո աստիճանաբար հայկական տպագրության գլխավոր կենտրոն է դառնում Երևանը: 1921-ին այստեղ կազմակերպվեց պետական հրատարակչություն (Պետհրատ), որը ստանձնելով տարբեր բովանդակության գրքերի խմբագրման, հրատարակման գործը՝ լույս է ընծայել բազմաբնույթ գրքեր: 1964-ին Պետհրատը վերանվանվեց «Հայաստան»:

1920–1986-ին Սփյուռքում հայկական տպագրության գլխավոր կենտրոններ են եղել Կ. Պոլիսը, Կահիրեն, Բեյրութը: Նույն ժամանակաշրջանում հայկական տպագրություն է իրականացվել Նոր Ջուղայում, Թավրիզում, Թեհրանում, նաև Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի, Աֆրիկայի շատ այլ քաղաքներում:

XXI դարասկզբին Հայաստանում լույս է տեսել մոտ 1200 անուն գիրք և ավելի քան 600 անուն պարբերական: Ներկայումս 50-ից ավելի հայկական տպարաններ են գործում նաև Սփյուռքում՝ Վենետիկում, Վիեննայում, Կահիրեում, Երուսաղեմում, Հալեպում, Թեհրանում, Ստամբուլում, Աթենքում, Սոֆիայում, Փարիզում, Լոս Անջելեսում, Բոստոնում, Նյու Յորքում, Ֆրեզնոյում, Բեյրութում, Մոսկվայում և այլուր՝ նպաստելով տպագիր խոսքի զարգացմանը²⁸:

²³ Նույն տեղում, էջ 386:

²⁴ Ե. Դ ու ը յ ա ն. Պատմություն հայ մատենագրության, Կ. Պոլիս, 1885, էջ 41–42:

²⁵ Հ. Մ ա ռ ո լ թ յ ա ն. Գրիգոր Նարեկացիի մեր օրերին.– «Էջմիածին», 1972, թիվ 7, էջ 25:

²⁶ Տե՛ս Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833–1996 թթ.), կազմ.՝ Ա. Ա. Մուրադյան, խմբագիր՝ Գ. Ա. Մուքիսայան, Երևան, 2011:

²⁷ Գ. Մ ո լ թ ի ա ս յ ա ն. Հայկական գրատպության կամ տպագրական քաղաքակրթության 500-ամյակը (1512–2012).– Հայկական տպագրության 500-ամյակը (1512–2012), էջ 8:

²⁸ Գ. Մ ո լ թ ի ա ս յ ա ն. Հայկական գրատպության 500-ամյակը.– «Մանկավարժական համալսարան», 2009, ապրիլ, թիվ 4, էջ 7:

Նկատենք, որ տարբեր ժամանակահատվածներում տարբեր վայրերում հայերեն և օտար լեզուներով լույս են տեսել հայ ձեռագիր և տպագիր գրքի ու պարբերական մամուլի մատենագիտություններ և պատմական տեսություններ (Մ. Միանսարյանց, Գ. Զարբհանսյան, Ա. Սալմասյան, Վ. Զարդարյան, Ս. Քոչանջյան, Ա. Ղազիկյան, Հ. Անասյան, Գ. Գալեմբերյան, Գ. Լևոնյան, Հ. Պետրոսյան, Մ. Պոտուրյան, Մ. Բրոսսե, Հ. Շահխաթունյանց, Լ. Խաչիկյան, Ն. Պողարյան, Տ. Պալյան, Բ. Սարգիսյան, Ա. Սյուրմեյան, Հ. Տաշյան, Ս. Տեր-Ներսեսյան, Ֆ. Մակլեր, Ֆ. Կոնիբեր, Գ. Վիլֆրուա, Հ. Սիրունի, Ա. Կարինյան, Գ. Սուքիասյան), հնատիպ գրքերի մատենագիտական ցանկեր, գրացուցակներ, մատենագիտական տարեկան հրատարակություններ, գրադարանային գրացուցակներ, հրատարակչական և գրավաճառային գրացուցակներ, ձեռագրացուցակներ, գրքի տարեգրեր:

Հայ տպագիր գիրքը 500 տարի շարունակ եղել է հայության ինքնահաստատման և գոյատևելու ձգտման արտահայտությունը: Այն իր ինքնատիպ դիմագծով պատվավոր տեղ է զբաղեցնում համաշխարհային մշակույթի գանձարանում:

500-ЛЕТИЕ АРМՅЯНСКОГО КНИГОПЕЧАТАНИЎЯ

АНАИТ МУРАДЯН

Резюме

Армянская печатная книга одна из древнейших в мире. Ее появление стало для армянского народа беспрецедентной возможностью для самосохранения и развития. Первая армянская книга «Урбатагирк» была издана в 1512 г. в Венеции усилиями Акопа Мегартародона — родоначальника и основателя армянского книгопечатания. Роль Абгара Дпира Тохатеци и его политическая и типографическая деятельность тоже очень велика. В XVI в. армянское книгопечатание было основано в Венеции, в Константинополе, в Риме. Значительна роль армян, проживающих в Иране, в развитии книжной культуры и книгопечатания. Важным является основание армянской типографии в Амстердаме и издательско-типографическая деятельность Воскана Ереванци. В Амстердаме в 1666 г. вышла Библия на армянском языке, а в 1695 г. первая армянская географическая печатная карта. Созданием типографии в Эчмиадзине в 70-е годы XVIII в. начинается новый этап книгоиздательства, что послужило мощным стимулом для развития научной мысли в Армении. В Иерусалиме в 1832 г. была создана типография, которая существует до сих пор. В течение более 180 лет здесь издано около тысячи наименований книг, посвященных вопросам богословия, философии, истории, риторики, грамматики, математики, географии и др. Велика роль также мхитаристов в развитии армянского книгопечатания, культуры и образования. Армянское книгопечатание еще более бурно развивалось в первой половине XIX в. Новый размах и подъем были обусловлены целым рядом внутренних и внешних факторов. Во 2-й половине XIX в. и начале XX в. в Арцахе быстрыми темпами развивалось книгопечатание, которое сумело достичь значительных успехов, что было связано с общеармянским

культурным расцветом. Только в армянских колониях Индии в первом–втором десятилетиях XIX в. было открыто десять типографий. Первые армянские типографии основываются в Москве, Тифлисе, Шуше, Иерусалиме. В XX в. по настоящее время типографии в армянской диаспоре действуют в Венеции, Вене, Бейруте, Иерусалиме, Париже, Новой Джульфе, США, в России и других местах. В каждом временном периоде старинная печатная книга имела свое идеологическое и практическое значение. В течение последующих десятилетий центры по изданию армянских книг и периодических изданий стали функционировать в различных уголках мира. Армянское книгопечатание по сей день выполняет свою историческую миссию.

THE 500TH ANNIVERSARY OF THE ARMENIAN BOOK-PRINTING

ANAHIT MOURADYAN

S u m m a r y

The Armenian printed book is one of the oldest books in the world. It appeared to be an unprecedented opportunity for the national self-preservation and development of the Armenians. “Urbatagirq” – the first Armenian book was published in Venice in 1512 by the efforts of Hakob Meghapart – the founder of the Armenian book-printing. The role of Abgar Dpir Tokhatetsi’s activity in the spheres of Armenian book-printing and policy was also significant. In the 16th century the Armenian book-printing centers were founded in Venice, Constantinople, Rome. The role of Armenians living in Iran was great concerning the development of the book culture and book-publishing. The foundation of the Armenian printing in Amsterdam and the printing - publishing activity of Voscan Yerevantsi was important. In Amsterdam he published the first Armenian Holy Bible in 1666, and the first Armenian geographical map was published there in 1695. A new era of book-publishing started in the 70s of the 18th century with the foundation of book-printing in Echmiatzin which greatly stimulated the development of the scientific thought in Armenia. In Jerusalem in 1832 an Armenian book-publishing was founded which has been existing up to now. During the past 180 years nearly a thousand of Armenian books were published devoted to different problems of theology, philosophy, history, art of rhetoric, grammar, mathematics, geography, etc. The role of the Mekhitarists in the development of the Armenian book-printing, culture and education is great. The Armenian book-printing greatly developed in the first half of the 19th century. These new growth and rise were stipulated by several internal and external factors. In the second half of the 19th and at the beginning of the 20th century in Artsakh the book-printing developed at full speed which managed to achieve considerable progress closely connected with culture growth. In the Armenian colonies in India 10 book printing centers were founded at the beginning of the 19th century. The first Armenian book-publishing centers were founded in Moscow, Tiflis, Shushi, Jerusalem. In the 20th century up to now the book-printing centers in the Diaspora exist in Venice, Vienna, Beirut, Jerusalem, Paris, New Julfa, USA, Russia and other places. The old printed book had its ideological and practical significance in every time period. During the last decades the Armenian book and periodical publishing centers began to function in different corners of the world. The Armenian printed book has been fulfilling its historical mission up to now.